

## ԽԱՂԱՂԱՊԱՅ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ ՅՆԱՐԱՎՈՐ ԽԱՂԱՂԱՊԱՅ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### Մակար ՄԵԼԻՔՅԱՆ

մագիստրոս

**Ներածություն.** Խաղաղապահ գործողությունները ժամանակակից հակամարտությունների կարգավորման օժանդակ կառուցակարգերից են: Թեև խաղաղապահ գործողություններն ուղղակիորեն չեն նշվում ՄԱԿ-ի կանոնադրությունում, այնուամենայնիվ խաղաղապահ առաքելությունների հիմնումը կամ լիազորումը ՄԱԿ-ի՝ միջազգային խաղաղության ու անվտանգության պահպանմանն ուղղված գործունեության հիմնական միջոցներից մեկն է:

Ներկայումս ԵԱՀԿ Մինսկի խմբի միջնորդությամբ հայ-ադրբեջանական բանակցությունների շրջանակներում քննարկվում է նաև Լեռնային Ղարաբաղում խաղաղապահ ուժերի տեղակայման հարցը<sup>1</sup>: Ուստի խաղաղապահ գործողություններին առնչվող խնդիրները քննարկելիս մենք հատուկ ուշադրություն ենք դարձրել Լեռնային Ղարաբաղում հնարավոր խաղաղապահ գործողությունների իրականացման դեպքում հնարավոր խնդիրներին:

ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի նախկին տեղակալ Մարակ Գոուլդինգը խաղաղապահ գործողությունները սահմանել է հետևյալ կերպ. «Խաղաղապահ գործողությունները ՄԱԿ-ի հրամանատարության ներքո գտնվող դաշտային գործողություններ են, որոնցում միջազգային քաղաքացիական և ռազմական անձնակազմը տեղակայված են կողմերի համաձայնությամբ, որպեսզի օգնեն վերահսկելու և լուծելու առկա և հնարավոր միջազգային հա-

կամարտությունները կամ այն ներքին հակամարտությունները, որոնք միջազգային հստակ նշանակություն ունեն<sup>2</sup>:

ՄԱԿ-ի խաղաղապահ գործողությունների առանձնահատկություններն են. 1. կողմերի համաձայնությունը, 2. Անվտանգության խորհրդի շարունակական ամուր աջակցությունը, 3. հստակ և կիրառելի մանդատը, 4. ուժի կիրառումից զերծ մնալը՝ բացառությամբ ծայրահեղ միջոցի, 5. ինքնապաշտպանության դեպքերի, զորք տրամադրող պետությունների պատրաստակամությունը մատակարարելու զինված ուժեր և անդամ պետությունների պատրաստակամությունը ապահովելու համապատասխան ֆինանսավորումը<sup>3</sup>:

### Խաղաղապահ գործողությունների հիմնումը:

ՄԱԿ-ի կանոնադրության մեջ խաղաղապահ գործողությունների հիմքը Անվտանգության խորհրդի և Գլխավոր ասամբլեայի գործունեությունը կարգավորող մի շարք ընդհանուր սկզբունքներ են:

Կանոնադրության VI գլուխը ՄԱԿ-ում խաղաղապահ գործողությունների հիմնման համար օգտագործվող հիմնական իրավական հիմքն է: 36(1) հոդվածի համաձայն՝ Անվտանգության խորհուրդը իրավասու է վեճի կարգավորման համար հանձնարարել համապատասխան ընթացակարգ կամ եղանակ<sup>4</sup>: Անվտանգության խորհուրդը սովորաբար մանդատը տրամադրում է վեց ամիս ժամկետով և պարբերաբար երկարածում այն կես ևս վեց ամսով, որպեսզի պահպանի ճնշումն այն կողմի վրա, որին ձեռնտու չէ խաղաղապահների դուրսբերումը:

VI գլխով Անվտանգության խորհրդի հանձնարարականները պարտադիր ուժ չունեն<sup>5</sup>: Կանոնադրության 2(7) հոդվածի

### **ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

համաձայն՝ ՄԱԿ-ը պարտավոր է չմիջամտել անդամ պետությունների ներքին իրավասության հարցերին՝ բացառությամբ VII գլխով նախատեսված հարկադրական գործողությունների: Ուստի VI գլխով խաղաղապահ առաքելություն հիմնելու համար Անվտանգության խորհրդի բանաձևը պետք է ստանա առաքելության տեղակայման պետությունների համաձայնությունը: Տեղակայման պետությունը կարող է իր համաձայնությունը տալուց հետո ցանկացած պահի հետ վերցնել այն: Այսպես, Եգիպտոսը պահանջեց, որ UNEF I-ը դադարեցնի իր գործունեությունը, սակայն կարճ ժամանակ հետո դրան հետևեց նոր զինված ընդհարումը: Կողմերի համաձայնությունը հիմնականում տրվում է տեղակայման պետության կառավարության և ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի միջև նուտաների փոխանակության միջոցով: Խաղաղապահ առաքելության հիմնման համար «ձախողված պետությունների» կամ ոչ պետական կազմավորումների համաձայնությունը պարտադիր չէ, սակայն խաղաղապահ առաքելության արդյունավետությունը բարձրացնելու համար ՄԱԿ-ը մեծ մասամբ հայցում է բոլոր կողմերի համաձայնությունը:

Անվտանգության խորհրդի մանդատը և տեղակայման պետության համաձայնությունը ստանալուց հետո խաղաղապահ առաքելությունը ձևավորվում է որպես Անվտանգության խորհրդի օժանդակ մարմին՝ ՄԱԿ-ի կանոնադրության 29-րդ հոդվածին համապատասխան:

VI գլխի հիման վրա կազմավորված խաղաղապահ առաքելությունները լիազորված չեն ուժ կիրառելու: Ըստ Արդարադատության Միջազգային Դատարանի՝ խաղաղապահ գործողությունը կարող է կազմավորվել առանց VII գլխին հղում կատարելու, եթե այն չի ներառում որևէ պետության դեմ ուժի կիրառում: Սակայն

ԱՄԴ-ն մեկնաբանում է VII գլխով նախատեսված հարկադիր գործողությունները բացառապես որպես պետության դեմ իրականացվող գործողություններ<sup>8</sup>: Յետևաբար՝ ոչ պետական դերակատարների կամ խմբերի դեմ ուժի կիրառումը կարող է իրականացվել նույնիսկ առանց VII գլխով նախատեսված լիազորություններ ստանալու:

Անվտանգության խորհուրդը իրավասու է հղում կատարել VII գլխին և արդեն իսկ կազմավորված խաղաղապահ գործողությունների մանդատին հավելել հարկադրական լիազորություններ, որի դեպքում արդեն կողմերի համաձայնությունը ստանալը պարտադիր պայման չէ: Այսպես, Սոմալիում (UNOSOM II) և Չարավսլավիայում (UNPROFOR) խաղաղապահ առաքելությունները, որոնք նախապես կազմավորվել էին առանց հարկադրական լիազորությունների, լրացուցիչ մանդատ ստացան, որը ներառում էր նաև հարկադիր միջոցառումներ<sup>9</sup>:

Ըստ ԱՄԴ-ի՝ ՄԱԿ-ի կանոնադրության 11(2) և 14-րդ հոդվածները օժտում են Գլխավոր ասամբլեային նույնանման լիազորություններով, ինչ 36-րդ հոդվածը Անվտանգության խորհրդին, և կարող են հիմք հանդիսանալ խաղաղապահ գործողությունների համար, ինչպես որ դա տեղի ունեցավ UNEF-ի և ONUC-ի դեպքում:

Ճիշտ է, Անվտանգության խորհուրդը առաջնային պատասխանատվություն է կրում միջազգային խաղաղության և անվտանգության ոլորտում, սակայն այդ պատասխանատվությունը բացարձակ չէ, և Գլխավոր ասամբլեան ևս կարևոր դեր է խաղում միջազգային խաղաղության պահպանման ոլորտում<sup>10</sup>: Գլխավոր ասամբլեայի համար միակ սահմանափակումը 12-րդ հոդվածն է, որի համաձայն Գլխավոր ասամբլեան իրավասու չէ զբաղվելու այն խնդիրներով, որոնցով արդեն զբաղվում է Անվտանգության խորհուրդը: Սակայն 377 բանաձևի համաձայն (Uniting for Peace), եթե Անվտանգության խորհուրդը չի կարողանում իրագործել իր առաջնային պա-

տասխանատվությունը, ապա Գլխավոր ասամբլեան պետք է անմիջապես քննարկի այդ խնդիրը և համապատասխան հանձնարարականներ տա կոլեկտիվ գործողությունների մասնակիցներին<sup>11</sup>:

Խաղաղապահ առաքելությունների ընդհանուր ղեկավարումն իրականացվում է Քարտուղարության և Գլխավոր քարտուղարի կողմից: ՄԱԿ-ի կանոնադրության 98-րդ հոդվածի համաձայն՝ Անվտանգության խորհուրդը Գլխավոր քարտուղարին կարող է վստահել որոշակի գործառույթներ: Այսպես, խաղաղապահ գործողությունների ղեկավար սովորաբար նշանակվում է տեղակայման պետությունում *Գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչը* (SRSG), ռազմավարական ղեկավարումն ու քաղաքական ուղղորդումը իրականացվում է *խաղաղապահ գործողությունների ղեկարտամենտի* կողմից (DPKO), իսկ խաղաղապահ գործողությունների մատակարարմամբ և վարչական օժանդակությամբ զբաղվում է *Դաշտային մատակարարման ղեկարտամենտը* (DFS), որը հաշվետու է խաղաղապահ գործողությունների ղեկարտամենտին<sup>12</sup>:

ՄԱԿ-ի կողքին տարածաշրջանային կազմակերպությունները ևս իրավասու են խաղաղապահ գործողություններ իրականացնել՝ ինչպես ՄԱԿ-ի մանդատով, այնպես էլ առանց դրա: Նման խաղաղապահ առաքելություններ իրականացրել են Ամերիկյան պետությունների կազմակերպությունը, Աֆրիկյան Միությունը, ՆԱՏՕ-ն, Եվրոպական Միությունը, ինչպես նաև ԱՊՀ-ն: Որոշ դեպքերում ՄԱԿ-ը և այլ կազմակերպություններն իրականացնում են համատեղ խաղաղապահ առաքելություններ: Ընդ որում՝ միայն ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդն է իրավասու լիազորելու հարկադրական գործողություններ VII-րդ գլխի հիման վրա, իսկ տարածաշրջանային կազմակերպություններն իրավասու են կազմակերպել խաղաղապահ գործողություններ՝ առանց ուժ կիրառելու իրավասության:

### Խաղաղապահ առաքելությունների հիմնական գործառույթները

Խաղաղապահ գործողություններն ըստ իրենց մանդատներում ամրագրված գործառույթների բաժանվում են երկու խմբի՝ դասական և բազմակողմանի:

Դասական խաղաղապահ առաքելությունների հիմնական նպատակը հակամարտող կողմերի միջև «կապույտ պատնեշի» ձևավորումն է, որը վերջիններիս լրացուցիչ երաշխիքներ կտրամադրի առ այն, որ մյուս կողմը չի խախտի կնքված զինադադարը և չի ձգտի ռազմավարական առավելություն ստանալ: Այնուամենայնիվ, եթե կողմերից մեկը նպատակ ունենա վերսկսել ռազմական գործողությունները, ապա խաղաղապահները չեն կարողանա կանխել ագրեսիան: Այսպես, ՄԱԿ-ի խաղաղապահ ուժերը չկարողացան կանխել 1967 թվականի արաբա-իսրայելական պատերազմը և 1974 թվականի Թուրքիայի ներխուժումը Կիպրոս՝ գտնվելով շփման գոտում: Մեկ այլ դեպքում՝ 1982 թվականին, Իսրայելական զորքերը շարժվեցին դեպի Լիբանան, և UNIFIL-ի խաղաղապահները մի կողմ քաշվեցին:

Անհրաժեշտ է ընդգծել նաև, որ խաղաղապահ գործողությունները սոսկ ժամանակավոր միջոցառումներ են, որոնց նպատակը ռազմական գործողությունների կանխարգելմանն օժանդակելն է: Իսկ վեճի հիմքում ընկած խնդիրների լուծման մեջ խաղաղապահ գործողությունների դերակատարությունը նվազագույն է<sup>13</sup>:

Դասական խաղաղապահ գործողությունների հիմնական լիազորությունները հետևյալներն են՝

- Դիտարկում և զեկույցների պատրաստում՝ օգտագործելով դիտակետեր, ստուգայցեր, թռիչքներ և այլ տեխնիկական միջոցներ՝ կողմերի համաձայնությամբ,
- Ձինադադարի վերահսկում և ստուգման կառուցակարգերի աջակցություն,
- Տեղակայում որպես բուֆերային և վստահության ամրապնդման միջոց<sup>14</sup>:

1973 թվականի արաբա-իսրայելական

### **ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

պատերազմի ավարտից հետո կազմավորված UNEF II-ը (ՄԱԿ-ի ճգնաժամային գործերը) համարվում է դասական խաղաղապահ գործողությունների օրինակ: UNEF II-ը բաղկացած էր աշխարհի չորս հիմնական տարածաշրջանները ներկայացնող պետություններից: Առաքելության մանդատը Անվտանգության խորհրդի կողմից սահմանվել էր 6 ամիս և պարբերաբար երկարաձգվում էր: UNEF II-ը թեթև սպառազինությամբ անկողմնակալ ուժ էր, որի գործառույթների մեջ մտնում էին զինադադարով նախատեսված ապառազմականացված զոտու վերահսկումը և զինադադարով նախատեսված այլ դրույթների պահպանումը<sup>15</sup>:

Դասական խաղաղապահ առաքելությունները գերազանցապես կիրառվում էին սառըպատերազմյան միջպետական հակամարտությունների համար: Սակայն Սառը պատերազմի ավարտից հետո հակամարտությունները գերազանցապես կրում էին ներպետական բնույթ, և այդ պայմաններում դասական խաղաղապահ առաքելություններն այլևս անարդյունավետ էին: Սառը պատերազմի ավարտից հետո Անվտանգության խորհուրդը կիրառում է նաև VII գլուխը, երբ լիազորում է խաղաղապահ գործողություններ հետևող ֆլիկտային տարածքներում, ուր պետությունը ի վիճակի չէ պահպանելու ներքին անվտանգությունն ու հասարակական կարգը<sup>16</sup>:

*ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (UNDP) վիճակագրության համաձայն՝ Բեռլինի պատի անկումից հետո մինչև 1995 թվականը ամբողջ աշխարհում 82 զինված հակամարտություն է տեղի ունեցել, որոնցից 79-ը՝ ներքին<sup>17</sup>:*

Բազմակողմ խաղաղապահ առաքելությունների հիմնական գործառույթներն են՝

– Ստեղծել և ապահովել կայուն միջավայր՝ ամրապնդելով պետության հնարավորությունները մարդու իրավունքների

ամբողջական հարգման պայմաններում,

– Խրախուսել քաղաքական գործընթացները՝ խրախուսելով երկխոսությունն ու վերաինտեգրումը, ինչպես նաև աջակցել լեգիտիմ և արդյունավետ կառավարման ինստիտուտների կազմավորմանը,

– Ապահովել համապատասխան պայմաններ, որպեսզի ՄԱԿ-ը և այլ միջազգային դերակատարները կարողանան պետության մակարդակով իրականացնել իրենց գործունեությունը փոխկապակցված և համակարգված ձևով<sup>18</sup>:

Խաղաղապահները դասական գործառույթներից բացի սկսեցին կատարել մի շարք նոր գործառույթներ: Որոշ խաղաղապահ գործողություններ ստացան լրացուցիչ հարկադրական գործառույթներ (UNPROFOR), կամ նրանք կատարում են նաև հանրաքվեի կազմակերպման գործառույթներ (UN-TAET), կամ նրանք իրականացնում են ոչ պետական կազմավորումների զինաթափում (ONUCA), կամ աջակցություն են ցուցաբերում Գլխավոր քարտուղարի միջնորդական առաքելության իրականացմանը (UNFICYP), կամ կողմերի միջև իրականացնում գերիների փոխանակություն (ONUC) և այլն<sup>19</sup>:

Առանձնահատուկ կառուցվածք ունի Կոսովոյում ՄԱԿ-ի խաղաղապահ առաքելությունը (UNMIK): UNMIK-ը բաղկացած է չորս հիմնասյուներից՝ 1. մարդասիրական (UNHCR-ի հետ համատեղ), 2. քաղաքացիական կառավարման (իրականացվում է ՄԱԿ-ի կողմից), 3. ժողովրդավարացման (ԵԱՀԿ-ի կողմից), 4. վերակառուցման (ԵՄ կողմից)<sup>20</sup>:

Գլխավոր ասամբլեայի ընդունած չափանիշների համաձայն՝ դասական խաղաղապահ առաքելությունները պետք է տեղակայվեն Անվտանգության խորհրդի կողմից մանդատ ստանալուց 30 օրվա ընթացքում, իսկ բազմակողմ խաղաղապահ առաքելությունները՝ 90 օրվա ընթացքում<sup>21</sup>:

**Խաղաղապահ գործողությունների արդյունավետության խնդիրը:**

Ի՞նչ նախապայմաններ են անհրաժեշտ

արդյունավետ խաղաղապահ գործողությունների համար: Նախ, խաղաղապահ առաքելության արդյունավետության գնահատումն ունի բավականին մեծ սուբյեկտիվ տարր այն առումով, որ եթե խաղաղապահների լիազորությունները ու ռազմական կարողությունները սահմանափակ լինեն, ապա դա կնվազեցնի վերջիններիս դերակատարության աստիճանը՝ հնարավորություն չտալով գործի դնել իրենց կարողություններն ամբողջությամբ: Մյուս կողմից, եթե խաղաղապահները գործեն լայն լիազորությունների շրջանակներում, ապա դրա հետ մեծանում է նաև խաղաղապահների կողմից կողմնակալություն ցուցաբերելու և զորք տրամադրող պետությունների շահերի տեսանկյունից գործելու վտանգը:

Որպես խաղաղապահ գործողությունների հաջողության գրավական նշվում են երեք հիմնական նախապայմաններ՝ 1. կողմերի համաձայնությունը, 2. անկողմնակալությունը և 3. ուժի կիրառումը բացառապես ինքնապաշտպանության նպատակով<sup>22</sup>: Ըստ նախկին Գլխավոր քարտուղարի՝ ՄԱԿ-ի խաղաղապահ գործողությունների անհաջողությունների հիմնական պատճառն այս երեք սկզբունքներից որևէ մեկի խախտումն է եղել:

Անշուշտ, անկողմնակալությունը պետք է առաջնային նշանակություն ունենա խաղաղապահների համար, ինչպես որ դա առաջնային է միջնորդական առաքելությունների համար: Սակայն որոշ դեպքերում անկողմնակալությունը դառնում է երկրորդական, երբ առկա է լինում կողմերից մեկի կոպիտ իրավախախտումները կանխելու խնդիր<sup>23</sup>: ՄԱԿ-ի հիմնական ձախողումների փորձը 1993 թվականին Սոմալիում (UNOSOM II), 1994 թվականին Ռուանդայում (UNAMIR) և 1995 թվականին Սրեբրենիցայում (UNPROFOR), վկայում են, որ արդյունավետ խաղաղապահ գործողությունների համար վերը նշված պայմանները դեռ բավարար չեն:

Անհրաժեշտ է նաև, որ խաղաղապահ-

ների վրա դրված պարտականությունները համապատասխանեն նրանց իրական հնարավորություններին: Այսպես, Խաղաղապահ առաքելությունները Բոսնիայում և Սոմալիում չունեին բավարար ուժեր, որպեսզի կատարեին իրենց վրա դրված մանդատը: Բոսնիայում անվտանգ գոտիների պաշտպանության մանդատը ստանալուց հետո, ըստ Գլխավոր քարտուղարի, անհրաժեշտ էր ավելացնել խաղաղապահների թիվը 34 000-ով, սակայն դա տեղի չունեցավ, քանի որ ոչ մի պետություն պատրաստակամություն չհայտնեց տրամադրելու անհրաժեշտ ուժերը, և Սրեբրենիցայի ջարդերի կանխման համար խաղաղապահ ուժերն անզոր գտնվեցին<sup>24</sup>:

Մեկ այլ դեպքում՝ Ռուանդայում, ՄԱԿ-ի խաղաղապահ ուժերը որևէ կերպ չխաչընդոտեցին ցեղասպանության իրականացմանը: Տվյալ դեպքում ՄԱԿ-ի անհաջողության հիմնական պատճառը արագ արձագանքման կառուցակարգերի բացակայությունն էր, որն ուղակիորեն փոխկապված է վերը նշված նախապայմանի հետ: Իրավական տեսանկյունից Անվտանգության խորհուրդը իրավասու էր Ռուանդայի խաղաղապահ ուժերին հարկադրական մանդատով օժտել, որպեսզի վերջիններս կանխեին ցեղասպանությունը: Սակայն իրականում առանց նոր ուժերի խաղաղապահներն ի զորու չէին գործնական հաջողության հասնել ցեղասպանությունը կանխելու խնդրում:

Ռուանդայի անհաջողությունից խուսափելու համար ՄԱԿ-ը կան պետք է նախապես պայմանավորվածության գա խաղաղապահ ուժեր տրամադրող պետությունների հետ, որպեսզի վերջիններս պարտավորվեն անհրաժեշտության դեպքում լրացուցիչ ուժեր տրամադրել, կան էլ ՄԱԿ-ի շրջանակներում պետք է կյանքի կոչվի ՄԱԿ-ի բանակի կառուցակարգը: Ըստ դրա՝ ՄԱԿ-ը պետք է մի շարք պետությունների հետ համաձայնագիր կնքի ՄԱԿ-ի մշտական զորքերի ձևավորման մասին: Այս ուժերը պետք է վարժված լինեն մեկ միաս-

### **ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆԵՔ**

նական համակարգով և մարտական պատրաստվածության վիճակում տեղակայվեն իրենց երկրների տարածքում, որպեսզի անհրաժեշտության դեպքում ՄԱԿ-ը ունենա ստրատեգիական պահուստային ուժեր<sup>26</sup>:

Խաղաղապահ ուժերի արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ հաջորդ նախապայմանը խաղաղապահ ուժեր տրամադրող պետությունների կողմից խաղաղապահ առաքելության ղեկավարման վրա ազդեցության չեզոքացումն է: Այս նպատակի իրագործման համար անհրաժեշտ է, որպեսզի խաղաղապահ ուժերը կազմավորվեն վերջիններիս տեղակայման տարածքում ուղղակի շահեր չհետապնդող պետությունների զորքերից, և որ խաղաղապահ առաքելության ղեկավարումը կատարվի բարձր արդյունավետությամբ և հստակ ենթադասությամբ:

Այսպիսով, արդյունավետ խաղաղապահ գործողությունները գերազանցապես կախված են երեք հիմնական գործոնների՝ անկողմնակալ մոտեցման, արդյունավետ գործունեության և կոպիտ իրավախախտումների կանխարգելման համաչափ համադրումից:

#### **Լեռնային Ղարաբաղում հնարավոր խաղաղապահ գործողությունները (ամփոփման փոխարեն)**

Խաղաղապահ գործողությունների իրականացումը, ըստ լ'Աքվիլայի դրույթների, պետք է իրականացվեն որպես Լեռնային Ղարաբաղի անվտանգության երաշխիքներից մեկը: Սակայն, ինչպես նշվեց, խաղաղապահ գործողությունները կրում են ժամանակավոր բնույթ և չեն կարող դիտարկվել որպես անվտանգության երաշխիք: Խաղաղապահներն ընդամենը դիտարկում են կնքված պայմանագրերի իրականացումը և ուժ են կիրառում բացառապես ինքնապաշտպանության համար: Խաղաղապահ գործողությունները վաղ թե

ուշ կդադարեցվեն: Իսկ խաղաղապահների բացակայության պայմաններում հայ-ադրբեջանական սահմանը կվերադառնա այն վիճակին, որում էլ սկսվել էր հակամարտությունը՝ կրկին ռազմավարական առավելություն ընձեռելով Ադրբեջանին: Ուստի ապագայում Ադրբեջանը կօգտագործի ցանկացած առիթ՝ վերսկսելու ռազմական գործողությունները: Որպես պատերազմի առիթ կարող է ծառայել, օրինակ, ադրբեջանցիների իրավունքների պաշտպանությունը Լեռնային Ղարաբաղում:

Հետևաբար՝ հայկական կողմը չպետք է հրաժարվի Լեռնային Ղարաբաղի անվտանգության կոնկրետ երաշխիքներից՝ ի հաշիվ ժամանակավոր խաղաղապահ առաքելության: Իսկ Լեռնային Ղարաբաղի անվտանգության միակ կայուն երաշխիքը կլինի Քարվաճառի ու Լաչինի վերջնական միացումը Լեռնային Ղարաբաղին՝ որպես տարածքային փոխանակություն Ադրբեջանի կողմից օկուպացված Լեռնային Ղարաբաղի տարածքների հետ, ինչպես նաև զիջվող այլ հարակից տարածքների ապառազմականացումը:

Բազմակողմանի խաղաղապահ առաքելությունները իրականացնում են գործառույթների ավելի լայն շրջանակ, որոնք, ինչպես նշվեց, ներառում են հանրաքվեի կազմակերպումը, որոշակի կազմավորումների զինաթափումը, ՄԱԿ-ի միջնորդական առաքելությանն աջակցումը, ժամանակավոր կառավարման գործառույթների իրականացումը, փախստականների և ՆՏԱ-ների անվտանգ վերադարձի ապահովումը և այլն: Սակայն նշված գործառույթներից և ոչ մեկի կարիքը Լեռնային Ղարաբաղը չի զգում: Արցախի պետական ինստիտուտները վերահսկում են երկրամասի խաղաղ զարգացումը և արդյունավետ կերպով իրականացնում են իրենց իշխանական լիազորությունները: Ավելին, նշված գործառույթները ծառայում են հենց Ադրբեջանի շահերին: Եթե խաղաղապահները նման գործառույթներով օժտվեն, ապա վերջիններս ոչ թե կդառնան Լեռնային Ղարաբաղի

անվտանգության երաշխավորները, այլ փաստացի կգործեն վերջինիս շահերին հակառակ:

Հայկական կողմի համար Լեռնային Ղարաբաղում խաղաղապահների դրական գործառույթները կարող են լինել հետևյալը.

1) խաղաղապահների տեղակայումը որպես «կապույտ բուֆեր» երկու կողմերի զորքերի միջև, որը նվազագույնի կհասցնի վերջնական կարգավորման ընթացքում երկու զորքերի միջև հրադադարի խախտման ռիսկերը:

2) Ցանկալի է, որպեսզի խաղաղապահների մանդատում ամրագրվի, որ եթե Լեռնային Ղարաբաղը զինված հարձակման ենթարկվի, ապա Եվրոպական Միության արագ արձագանքման զորքերը (կամ համանման այլ որևէ զորամիավորումներ) կպաշտպանեն երկրամասի անվտանգությունը:

3) Վերջնական հանրաքվեում ՄԱԿ-ը և ԵՄ-ն պետք է ունենան իրենց դիտորդական առաքելությունը, որի լիազորումը կարող է ներառվի խաղաղապահ առաքելության մանդատի մեջ: Սակայն բուն հանրաքվեի կազմակերպումը ՄԱԿ-ին զիջելը ևս հղի է անկանխատեսելի արդյունքներով:

Հետևաբար՝ եթե Լեռնային Ղարաբաղում պետք է խաղաղապահ գործողություններ իրականացվեն, ապա մեզ համար առավել նպատակահարմար է, որ խաղաղապահ առաքելության մանդատը սահմանափակվի դասական գործառույթներով՝ սահմանների և բուֆերային գոտիների վերահսկողությամբ:

Խաղաղապահ գործողությունների առավել բացասական հատկանիշներից է դժվար կանխատեսելիության բարձր մակարդակը. խաղաղապահների շուրջ մշտապես բախվում են զորք տրամադրող պետությունների և ընդհանուր ղեկավարումն իրականացնող միջազգային կազմակերպությունների շահերը, որոնց ենթատեքստում տեղակայման պետությունների դերակատարությունը հակամարտության

կարգավորման հետագա ճակատագիրը որոշելու մեջ բավական նվազում է: Այդ իսկ պատճառով ի սկզբանե հստակ և մանրամասն մանդատը և առավել բարենպաստ պետությունների ներգրավումն առանցքային նշանակություն ունեն խաղաղապահ գործողությունների բարեհաջող ընթացքի համար: Օրինակ, Աբխազիայի և Հարավային Օսեթիայի դեպքում կողմերի միջև կնքված պայմանագրերով նախատեսված չէր խաղաղապահների դուրսբերման կարգը, ինչը լրացուցիչ խնդիրներ է ստեղծել ռուս-վրացական հարաբերություններում. Վրաստանը բազմիցս պահանջել է ԱՊՀ խաղաղապահների դուրսբերումը՝ վերջիններիս ներկայությունը որակելով իր տարածքի անօրինական օկուպացիա: Արդյունքում 2008 թվականի օգոստոսյան ռազմական գործողությունները սկսելու համար Վրաստանի իրավական հիմնավորումներից մեկը առանց իր համաձայնության խաղաղապահների ներկայությունն էր Հարավային Օսեթիայում, որոնց ոչնչացմանն էլ ուղղված էին վրացական զորքերի գործողությունները: Նման իրավիճակից խուսափելու համար անհրաժեշտ է նախապես պայմանագրային հիմքով սահմանել խաղաղապահ առաքելության դադարեցման կարգը:

Բազմակողմանի առաքելության գործառույթներից մեզ համար հատկապես վտանգավոր են ոչ պետական խմբավորումների զինաթափումն ու Հայաստանի կողմից Ղարաբաղին տրամադրվող ռազմական օգնության վերահսկումը:

Հետևաբար՝ Լեռնային Ղարաբաղում խաղաղապահների տեղակայման հնարավոր արդյունքներում բացասական գործոններն ավելի շատ են, քան դրականները, և ընդհանուր առմամբ խաղաղապահ գործողությունների ներառումը նպատակահարմար չէ: Ղարաբաղյան հակամարտության կարգավորումը կարող է իրականացվել նաև առանց խաղաղապահ գործողությունների իրականացման: Ի վերջո, Հայաստանն ու Ադրբեջանը 16 տարի արդեն ընդ-

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

հանրուր առնամբ պահպանում են զինադա-

դարի ռեժիմը և կարող են վերջնական կարգավորումը ևս իրականացնել առանց երրորդ կողմի ռազմական միջամտության<sup>26</sup>:

<sup>1</sup> *Statement by the OSCE Minsk Group Co-Chair countries*, L'AQUILA, Italy, 10 July 2009, available at <http://www.osce.org/item/38731.html>.

<sup>2</sup> Mark Goulding, *The Changing Role of the United Nations in Conflict Reslution and Peace-keeping*, speech given at the Singapore Institute of Policy Studies, March 13, 1991, p. 9.

<sup>3</sup> THOMAS G. WEISS ET AL., *THE UNITED NATIONS AND CHANGING WORLD POLITICS* (5<sup>th</sup> ed., 2007), p. 36.

<sup>4</sup> *Charter of the United Nations*, 1945, 1 UNTS XVI, Art. 33.

<sup>5</sup> MALCOLM SHAW, *INTERNATIONAL LAW* (6<sup>th</sup> ed., 2008), p. 1103.

<sup>6</sup> *Weiss*, *supra* note 3, p. 34.

<sup>7</sup> Alexander Orakhelashvili, *The Legal Basis of the United Nations Peace-Keeping Operations*, 43 VA. J. INT'L L. 485, pp. 519-522.

<sup>8</sup> *Certain Expenses of the United Nations (Article 17, paragraph 2, of the Charter)*, Advisory Opinion, I.C.J. Reports (1962), p. 167.

<sup>9</sup> *Orakhelashvili*, *supra* note 7 , p. 495.

<sup>10</sup> *Certain Expenses*, *supra* note 8 p. 271.

<sup>11</sup> UN Doc. A/Res/377 (1950), para. A.

<sup>12</sup> UN DPO, DFS, *UNITED NATIONS PEACEKEEPING OPERATIONS: PRINCIPLES AND GUIDELINES* (2008), p. 66.

<sup>13</sup> HILAIRE MCCOUBREY & NIGEL D. WHITE, *THE BLUE*

HELMETS: LEGAL REGULATION OF UNITED NATIONS MILITARY OPERATIONS (1996), p. 5, 11-12

<sup>14</sup> *Principles and Guidelines*, *supra* note 12, p. 21.

<sup>15</sup> *Ibid.*, p. 33.

<sup>16</sup> *Ibid.*, p. 14.

<sup>17</sup> UNDP, *HUMAN DEVELOPMENT REPORT* (1994), p.47.

<sup>18</sup> *Principles and Guidelines*, *supra* note 12, p. 22.

<sup>19</sup> See Katarina Mansson, *The forgotten Agenda: Human Rights Protection and Promotion in Cold War Peacekeeping*, 10 C&S LAW 379 (2005).

<sup>20</sup> See *Written Contribution of the authors of the unilateral declaration of independence*, para. 4.24, <http://www.icj-cij.org/docket/files/141/15678.pdf>.

<sup>21</sup> UN Doc. A/55/305—S/2000/809, p. xi.

<sup>22</sup> *Report of the Secretary-General on the work of the Organization*, UN Doc. A/50/60 - S/1995/1, para. 33; *Principles and Guidelines*, *supra* note p. 31.

<sup>23</sup> LORI F. DAMROSCH ET AL., *INTERNATIONAL LAW: CASES AND MATERIALS* (5<sup>th</sup> ed., 2009), p. 571.

<sup>24</sup> Yasushi Akashi, *The Use of Force in a United Nations Peace-Keeping Operation: Lessons Learnt From the Safe Areas Mandate*, 19 FORDHAM INT'L L.J. 312, p. 315.

<sup>25</sup> *Report supra* note 22, para. 43.

<sup>26</sup> *Shaw*, *supra* note 5, p. 1108.

---

## ПРАВОВОЕ РЕГУЛИРОВАНИЕ ОПЕРАЦИЙ ПО ПОДДЕРЖАНИЮ МИРА И ВОЗМОЖНАЯ МИРОТВОРЧЕСКАЯ ОПЕРАЦИЯ В НАГОРНОМ КАРАБАХЕ

**Макар МЕЛИКЯН**

*магистр*

---

**В** данной статье рассматриваются как правовые, так и международно-политические аспекты международных операций по поддержанию мира. Во второй части рассматриваются правовые основы развертывания операций по поддержанию мира Советом безопасности, Генеральной ассамблеей ООН, а так же другими международными организациями. Обращается особое внимание на разницу правовых основ размещения сил для поддержания мира и

размещения сил для принуждения к миру. В третьей части рассматриваются функции миротворческих сил характерные для операций по поддержанию мира. Мандаты миротворцев включают два основных группы функции — классические и многомерные. В третьей части рассматриваются необходимые основы для обеспечения высокой эффективности миротворческих операции, которые зависимы от обеспечения равновесия между основными правовыми и политическими факторами. В четвертой части рассматриваются вышеуказанные аспекты миротворческих операций в контексте возможной операции по поддержанию мира в Нагорном Карабахе.

---